ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.08.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/118

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 09.08.2018թ. թիվ 02/26-3/14432-18 գրությամբ «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 07.08.2018թ. թիվ ԴՎԱ/2949 գրության հիման վրա, 09.08.2018թ. նախաձեռնել է «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 07.08.2018թ. թիվ ԴՎԱ/2949 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27 ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի 13-րդ չափաբաժնի մասով «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգով վերոնշյալ մասնակցին armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում է կատարվել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացության համաձայն «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամաբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 11.191.700 ՀՀ դրամ գումարի չափով:

Ուստի գնահատող հանփնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 44-րդ կետը որոշեց «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ն չի ներկայացրել նաև Կարգի 45-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. **<u>«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Բողոքներ քննող անձը 09.08.2018թ. գրությամբ դիմել է «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.08.2018թ. թիվ 02/26-3/14432-18 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր կարծիք չի ներկայացվել:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Քրիստինա Մնացականյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/118 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 09.08.2018թ. թիվ 02/26-3/14432-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության 07.08.2018թ. թիվ ԴՎԱ/2949 գրությունը, «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի կողմից 26.06.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշումը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 25.05.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 7, 07.06.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 8 և 06.07.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 9 արձանագրությունները, Ընկերության կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 06.06.2018թ. տրված եզրակացությունը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ նյութական միջոցների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված

մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը 25.05.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 7 արձանագրության՝

- 4.1 կետով որոշել է Ընթացակարգի 13-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ին:

- 4.2 կետով որոշել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27 ծածկագրով գնանշման հարցման հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

- 4.3 կետով որոշել է՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցնող մասնակցի ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 06.06.2018թ. տրամադրած եզրացության համաձայն «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 11.191.700 ՀՀ դրամ գումարի չափով:

Հանձնաժողովը 07.06.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 8 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի ներկայացրած որակավորման փաստաթղթերի մաս կազմող տեխնիկական բնութագրում առկա են տարբերություններ Հրավերով սահմանված տեխնիկական բնութագրից, մասնավորապես.

- «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած ապրանքի տեխնիկական բնութագրում բացակայում է «Նմուշի աշխատանքի փորձարկումը նախապես իրականացվում է պատասխանատու ստորաբաժանման հետ, մինչև ամբողջ խմբաքանակի մատակարարումը» Հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պարտադիր և անհրաժեշտ պայմանը:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը 22.06.2018թ. որոշել է առաջարկել մասնակիցին սահմանված ժամկետում շտկել նույն արձանագրությամբ նշված անհամապատասխանությունը:

Հանձնաժողովը 06.07.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 9 արձանագրության 1.2 կետով արձանագրել է, որ «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա՝ 26.04.2018թ. դրությամբ ունի՝ 11.191.700 ՀՀ դրամ գումարի չափով ժամկետանց հարկային պարտավորություն և որոշել է մերժել վերջինիս կողմից ներկայացված հայտը:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ ԱԱՀ-ի գծով 2018թ. մինչև ապրիլի 21-ն ընկած ժամանակահատվածում ԱԱՀ-ի մասով բյուջե վճարման գումարները չեն հաշվանցվել Ընկերության ունեցած ԱԱՀ դեբետային մնացորդից, այլ ԱԱՀ-ի ունեցած պարտավորությունները հաշվանցվել են միասնական հաշվում ունեցած գումարներից, որի արդյունքում առաջացել է առկա պարտավորությունը: Ընկերության ներկայացուցիչը հայտնեց նաև, որ 27.04.2018թ. դրությամբ բյուջեի հանդեպ չունեն ոչ մի տեսակի հարկային պարտավորություններ՝ փոխարենը նշված ժամանակահատվածի համար Ընկերությունը ունեցել է ԱԱՀ-ի դեբետային մնացորդ: Ընկերության ներկայացուցիչը հավելեց նաև, որ առաջացած պարտավորությունը եղել է այն պատճառով, որ «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի հաշվապահ Զոյա Հմայակի Թովմասյանը նշված ժամանակահատվածում ակտիվ մասնակից է եղել հանրապետությունում ընթացող խաղաղ անհնազանդության երթերին և հանրահավաքներին և մասնակցելով հանրահավաքներին բացակայել է աշխատանքից:

Միաժամանակ Ընկերության ներկայացուցիչը, որպես ապացույց Բողոքներ քննող անձին ներկայացրեց նշված ժամանակահատվածում հանրապետությունում ընթացող խաղաղ անհնազանդության երթերին և հանրահավաքների ժամանակ կատարված «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի հաշվապահ Զոյա Հմայակի Թովմասյանի լուսանկարները և վերջինիս անձնագրի պատճենը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով - Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.
- 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին:
- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված

տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ պարենային ապրանքներ ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

• 7.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին

• 7.13 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերն ու առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը: Նույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

• 7.15 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են

իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.
- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

• ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 06.06.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն ՝ «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա՝ 26.04.2018թ. դրությամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություն՝ 11.191.700ՀՀ դրամ գումարի չափով:

• «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ նշված ժամանակահատվածում ունեցել է ԱԱՀ-ի 42.693.317 ՀՀ դրամ գումարի չափով դեբետային մնացորդ:

• «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի հաշվապահ Զոյա Հմայակի Թովմասյանը մասնակից է եղել Հայաստանի Հանրապետության տարածքում տեղի ունեցող քաղաքական հուզումներին և մասնակցելով հանրապետությունում ընթացող խաղաղ անհնազանդության երթերին և հանրահավաքներին, բացակայել է աշխատանքից:

• Նմանօրինակ իրավիճակի վերաբերյալ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 14.06.2018թ. թիվ 01/6.1/32927-18 գրությամբ հայտնել է, որ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով, 2018 թվականի հունվարի 1-ից սկսած, միասնական հաշվի միջոցով մարվող հարկային պարտավորությունների մարման նպատակով վճարումները կատարում են միասնական հաշվին: Հարկային պարտավորությունների կատարման վերջնաժամկետները սահմանված են օրենսգրքի համապատասխան բաժիններով, իսկ հարկային պարտավորությունների և դեբետային գումարների

հաշվառման կարգը՝ օրենսգրքի 319-րդ հոդվածով: Հարկային պարտավորությունների մարման կարգը սահմանված է օրենսգրքի 325-րդ հոդվածով, իսկ վերջինիս վերաբերող անցումային հարկային հարաբերությունների կարգավորումները՝ օրենսգրքի 456-րդ հոդվածով: Վերոնշյալ կարգավորումների ծրագրային ապահովման ներդրումը կրում է պիլոտային բնույթ, ուստի անհարժեշտ է հաշվի առնել 2018 թվականի հունվարի 1-ից հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման ու հարկային պարտավորությունների մարման նոր կարգին հարկ վճարողների իրազեկված չլինելու հանգամանքը:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ընկերության կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա՝ 26.04.2018թ., դրությամբ ունեցած հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունն առաջացել է «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի հաշվապահ Զոյա Հմայակի Թովմասյանի աշխատանքից բացակայելու պատճառով, ինպես նաև 2018 թվականի հունվարի 1-ից հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման ու հարկային պարտավորությունների մարման նոր կարգին հարկ վճարողների իրազեկված չլինելու հանգամանքով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի կողմից գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.08.2018թ. թիվ 02/26-3/14432-18 գրությամբ «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ